

Նոյեմբեր 11ին, ՄԱԿի 58րդ ընդհանուր ժողովին տեղի ունեցան Տնտեսական և Ընկերային խորհուրդի՝ ԷՔՍՕՔԻ անդամակցության ընտրությունները, որոնք երկու թափումով տեղի ունեցան համար թեկնածուներին չհայտնաբերված, Պիեռոուսիա, Մոլդովա և Լեհաստան:

ԷՔՍՕՔԻ անդամ ընտրություն համար անհրաժեշտ էր բուհարկության մասնակցող երկիրներում քուիներու երկու երրորդը (120-125 ձայն) ապահովել: Հայաստան ստացած է 127 քուի, գերազանցելով միս թեկնածուները: Մոլդովայի լեռն կոչված էր իր թեկնածուները, իսկ Լեհաստան էլ Պիեռոուսիա չեն ապահոված անհրաժեշտ քուիները, հետևաբար երկրորդ թափում տեղին համար մրցակցությունը պիտի շարունակուի:

ԷՔՍՕՔԻ Անվտանգության խորհուրդին էտք ՄԱԿի անենահեղինակաւոր մարմինն է:

ԼԻԻՔՍԱՄՊՈՒՐԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՁ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՊԵՏԵՐՈՒՆ ՀԵՏ, ԱՊՎ ՄԵԿՆԵՑԱԻ ԳԱՄԱՍԿՈՍ



Նախագահ գործ. էմիլ Լահուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց Լիւքսամպուրկի փոխ վարչապետ, արտաքին գործոց նախարար Լիտի Փոլֆրը: Նախագահը յայտնեց, թէ Միացեալ Նահանգներու Ծերակոյտին կողմէ Սուրիան հաշուետուութեան կանչելու օրինագիծի վաւերացումը կը հակադրուի չըջանին մէջ արդար եւ ամբողջական ազատութեան նպատակով ի գործ դրուած բոլոր ճիգերուն: Ան աւելցուց նաեւ, որ նշեալ որոշումը կ'ապացուցէ Ուաշինկթընի վրայ բանեցուած իսրայէլեան լուպիինկի ազդեցութիւնը:

Նախագահ Լահուտ նկատել տուաւ, որ նման կեցուածքներ կը ստեղծեն լարուած մթնոլորտ մը, որուն ընթացքին անկարելի կ'ըլլայ առարկայական լուծումներ գտնել չըջանալին տագնապին, ինչպէս նաեւ կը հարուածեն ՄԱԿի միջազգային որոշումներու գործադրութեան ընթացքը:

Նախագահ Լահուտ դիտել տուաւ, որ անկեղծ երկխոսութիւնը, հեռու ուժի եւ գորութեան բոլոր ձեւերէն, միակ միջոցն է իրաքի եւ Պաղեստինի մէջ տագնապներու լուծման:

Նախագահ Լահուտ նշեց, որ ամերիկեան Ծերակոյտին որոշումը կը զուգարկի ամերիկեան նախագահական ընտրութիւններու արդէն իսկ սկսած ընտրապայքարին, ինչ որ կը փաստէ, թէ սիոնական լուպիինկը կը ջանայ իր հաշուոյն իսրայէլի շահեր ապահովել:

Նախագահ Լահուտ Փորձերի հետ քննարկեց նաեւ չըջանալին իրադարձութիւններուն հանդէպ Լիբանանի կեցուածքը, յատկապէս ամերիկեան եւ եւրոպական ջանքերով պաղեստինցի գաղթականներու բնակեցման ծրագրին գծով, որ ամբողջովին կը հակադրուի ՄԱԿի թիւ 194 որոշումին:

Նախագահ Լահուտ ընդգծեց, որ Լիբանան կը մերժէ պաղեստինցի գաղթականներու բնակեցման ծրագիրը եւ կառչած կը մնայ իր կեցուածքին վրայ, առանց ընդունելու առաջարկուած բոլոր մը գրամը: Ան ըսաւ նաեւ, որ ՄԱԿն ու մեծ պետութիւններ, որոնք հովանաւորած են թափաքանակներու, յատկապէս կը մերժեն բնակեցման ծրագիրը:

Նախագահ Լահուտ վերահաստատեց, որ Լիբանան կը մերժէ նաեւ ահաբեկչութիւնը եւ կը վստահ Սուրիոյ ներկայիս անհանգիստ կացութեան կայունութիւնը ամրապնդելու:

Շար.՝ էջ 10

ԻՐԱՔԻ ՄԷՁ ԴԱՇՆԱԿԻՑ ՈՒԺԵՐՈՒ ԴԵՍ 3ԱՐԶԱԿՈՒՄՆԵՐԸ ԸԱՍԱՆ ԻՏԱԼԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ ՏՈՒՆ ԱՌՆՈՒԱԶՆ 18 ՁՈՐ. ԿԱՆ ՆԱԵՒ 8 ԻՐԱՔՑԻ ՁՈՐԵՐ ԵՒ ԲԱԶՄԱԹԻ ՎԻՐԱԴՈՐՆԵՐ



Ամերիկեան, բրիտանական ու լեհական ուժերը թիրախ դարձնող յարձակումները երէկ հասան իտալական ուժերուն, որոնք կորսնցուցին 18 պիւտոններէ քաղաքային մը՝ պիւտոնական կեդրոնի մը դէմ գործուած յարձակումի մը պատճառով: Յարձակումին կողմէի գաղտնի անունը, ինչպէս նաեւ 59 հոգի վիրաւորուեցաւ:

Իրաքի մէջ իտալացի մասնաւոր պատերազմային բանքերը յայտնեց, որ պահանջներով բեռնուած երկու բեռնակառքեր պայթած են պիւտոնական խարխուի մը վրայ: Իրաքի մէջ իտալացի զորքերը իրաք կը գտնուին խորհրդարանին որոշումով եւ հակառակ ինկած պահանջներուն տուն պիտի չլքան:

ՀԻՆԳ ՊԱՅԹՈՒՄՆԵՐ՝ ԿԵՂՈՒՆԱԿԱՆ ՊԱՂՏԱՍԻ ՄԷՁ

Հինգ գորտուր պայթուածներ ցնցեցին Պաղեստինի կեդրոնը, հաղորդեց ամերիկացի բանքեր մը երէկ գիշեր, աւելցնելով, որ ոչ մէկ յաւելեալ մանրամասնութիւն ունի այդ գծով:

«Լսեցինք պայթուածները, որոնք բաւական թիւ գին էին», ըսաւ բանքերը՝ դաշնակից ուժերու կեդրոնացուած զինուորի մը, որ կը գտնուի ուղիղ մայրաքաղաքի կեդրոնը: Միջուկ ու զինքը յաւելեալ ոչինչ հաղորդուեցաւ այս գծով:

կուսին կոհ գացին նաեւ ուրջ իրաքցիներ, ինչպէս նաեւ 59 հոգի վիրաւորուեցաւ:

Վարչապետ Սիլվիո Պերլուսոնի եւս ըսաւ, որ երէկուան Շար.՝ էջ 10

ԳԱՄԱՍԿՈՍ ԿԸ ՀԱԿԱԶԴԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԾԵՐԱԿՈՅՏԻ ՈՐՈՇՈՒՄԻՆ

Հակադարձելով ամերիկեան Ծերակոյտին կողմէ Սուրիոյ դէմ պատժամիջոցներու հաստատման որոշումին վաւերացման, Դամասկոս երէկ յայտնեց, թէ կը պատժուի պաղեստինցիներուն գործակից կանգնած ըլլալուն համար:

Ծերակոյտը երեքշաբթի օր վաւերացուցած էր Սուրիոյ Հաշուետուութեան օրինագիծը, որ անցեալ ամիս որդեգրուած էր Ներկայացուցչութեան Տան կողմէ:

Օրինագիծը, որ պէտք է ստորագրուի նախագահ Ճորճ Պուշինի կողմէ՝ օրէնք դառնալու համար, Սուրիան կ'ամրաստանէ ծայրայեղական գիւնեայներու հետ կապեր ունենալու եւ հաւաքական քանդուածի գէնքեր ձեռք բերել փորձելու յանցանքներով:

Անկիւ Սպիտակ Տան շարք մը ընտրանքներ կու տայ՝ պատժելու համար Սուրիան, ինչպէս՝ ամերիկեան արտածումները եւ առեւտրական շահարկումները սահմանափակելու, Դամասկոսի մէջ Ուաշինկթընի դիւանագիտական ներկայացուցչութիւնը աւելի ցած մակարդակի իջեցնել, ինչպէս նաեւ Մ. Նահանգներու մէջ սուրիացի դիւանագէտներու դէմ երթեկէ կ'սահմանափակումներ հաստատել:

Օրինագիծը նաեւ կ'արգիլէ «մէկէ աւելի գործածութեան» կապուած արհեստագիտութեան արտածումը Սուրիոյ, ինչպէս նաեւ կ'արտօնէ ամերիկեան կառավարութեան՝ Մ. Նահանգներու մէջ Սուրիոյ ունեցուածքները սառեցնել:

Անկիւ Սուրիոյ կողմէ կ'ըզգէ նաեւ Լիբանանի մէջ

ՕՍԿԱՆԵԱՆ ՊԵՐԼԻՆԵՆ ՊԻՏԻ ՄԵԿՆԻ ՄՈՍԿՈՒԱ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան երկօրեայ այցելութեամբ երէկ մեկնեցաւ Գերմանիա: Ան հանդիպումներ պիտի ունենայ Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Ետչա Ֆիշլըրի եւ Գերմանիոյ վարչապետի արտաքին քաղաքականութեան հարցերու խորհրդակցական Պերնտ Միւտցելպուրկի հետ: Պերլինի մէջ Օսկանեան պիտի մասնակցի «Հարաւային Կովկաս» քաղաքական մարտահրաւէրներ եւ զարգացման հեռանկարներ» միջազգային խորհրդաժողովին, որուն պիտի մասնակցին Հարաւային Կովկասի երեք երկիրներու արտաքին գործոց նախարարները, Հարաւային Կովկասի մէջ եւրոպական Միութեան ներկայացուցիչը, Իրանի, Ռուսիոյ, Թուրքիոյ կառավարութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ գիտնականներ եւ մասնագէտներ:

Վարդան Օսկանեան վաղը պիտի մեկնի Մոսկուա, ուր հանդիպումներ պիտի ունենայ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի եւ ԵԱՀԿի Մինսքի խմբակի ռուս նախագահ Եւրի Մերզլիակովի հետ: Նոյն օրը, ան հանդիպում պիտի ունենայ Մոսկուայի արտաքին յարաբերութիւններու հիմնարկի գաստիոսական կազմին եւ ռուսանոցութեան հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ ՌՈՒՍԱԿԱՆ ՕԴՈՒԹԻ «ՄԻԿ-29» ՕԴԱՆԱԻ ՄԸ «ԱՆՀԵՏԱՅԱԾ»

Ռուսական օդուժի «Միկ-29» օդանաւ մը երէկ «անհետացաւ» Հայաստանի Շիրակի մարզի Գոգարան շրջանին մէջ: Օդանաւը, որուն օդաչուն 39ամեայ Կոնստանտին Կարտաշն է, ժամը 12:50-ի մօտ անհետացած է ռուսաներու պատահական թռիչքի ժամանակ: Ան փորձառական թռիչք առած էր Իրեքունիի օդակայանէն:

Ի թիւս-Թասու լրատու գործակալութեան համաձայն, ակնատեսներ յայտնած են, թէ օդանաւը «անկանոն» թռիչքի ընթացք մը ունեցած է:

Ռուսական օդուժի լրատուական գրասենեակի պետ Ալեքսանտր Տրոպիշեւսկիի համաձայն, հայեւուս փրկարար խումբերը արդէն յայտնաբերած են հաւանական երկու վայր, ուր կրնայ ջարխախտուած ըլլալ «Միկ-29» օդանաւը:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան բանքեր Սէյրան Շահումյանի յայտնեց, թէ փրկարար աշխատանքներուն կը մասնակցին նաեւ ուղղաթիւներ, սակայն օդի աննպաստ պայմանները դժուարութեան կը մատնեն այդ աշխատանքները:

ՌԻԱՏ ԵՐԿԱԹԵԱՅ ԲԱԶՈՒԿԻ ԿԸ ԴԻՄԵ

ՌԻԱՏ, 12 (ԱՖՓ).- Սեուտական Արաբիա Զորքաբաժնի օր յայտարարեց է, թէ վարչապարզ տապալել փորձող իսլամական զինեալներու հետ միայն գեներալի եւ սուրբով պիտի բանակցի, մերժելով ընթացք տալ կրօնադրներու միջնորդութեան առաջարկին՝ անճանապարհական յաւելեալ ուժերու մտնելու կանխարգիլման համար:

Ներքին գործոց նախարար Նայեֆ պըն Ապտուլ Ազիզ յայտարարեց, որ 17 գոն եւ 122 վիրաւոր լսած էր:

«Քայլիտա» ցանցը, որ ստանձնած էր գործողութեան պատասխանատուութիւնը, յաւելեալ յարձակումներու սպառնալիք կատարած է նաեւ:

Սեուտի խումբ մը կրօնականներ առաջարկեց

չափազանց խիստ պիտի ըլլայ», ըսած էր ան:

Նայեֆ իշխանը հերքած է, թէ նորագոյն գործողութեան հետքեր չկան: Սակայն, ըսած է ան, ապահովութեան ուժերը պիտի շարունակեն հետապնդել ռեպորտները եւ գանձարկարութեան պիտի յանձնեն:

Հ. Յ. Գ. ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հ. Յ. Գ. ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑ

Խորհրդարանի նախկին նախագահ՝ Երեսփոխան ԸԻՄԵՅՆ ԸԻՄԵՅՆԻ ԻՆՏ

Նիւթ ԹԱՅԵՏԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ

Տեղի կ'ունենայ Զորքաբաժնի, 19 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:30ին, Յակոբ Տեր Մելքոնեան սրահին մէջ:

ՊԵՐՏ ՄՏԱԿԱՆՈՒԹԻՆ ԿԸ ՅԱՅՏԵ

Ծերակոյտական Ռուսիոյ Պրորտ, որ երկարատեւ էր վեր կը քննադատէ Միջին Արեւելքի մէջ ամերիկեան զինուորական քաղաքականութիւնը, երեքշաբթի օր մտաւ Վիեննայի յայտնեց, թէ օրինագիծը կրնայ օգտագործուիլ՝ Սուրիոյ դէմ զինուորական ներխուժում մը կատարելու համար:

Ան յատկապէս նշած է օրինագիծին մէկ յօդուածը, որ կը վերաբերի իրաքի մէջ գործող ամերիկեան ուժերուն դէմ Սուրիոյ կողմէ «թշնամական արարքներու», ըսելով, թէ ինք սակայն որեւէ փաստ չէ տեսած, թէ Սուրիոյ կառավարութիւնը պատասխանատու է իրաքի մէջ ամերիկեան ուժերուն դէմ յարձակումներուն:

(ԱՖՓ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԸԱՆԱԶՈՒՄԸ ԹՈՒՐԲՈՒՅ ԿՈՂՄԵՆ ԱՆԽԱՊԱՅՅՄԱՆ Ե ՀԱՅ-ԹՈՒՐԲ ԵՐԿԻՍՏՈՒԹԵԱՆ

ԷՁ 5

ՆԱՍԱԿ ԸԱՅՐԵՆԻՔԷՆ

ԳԱՐՉ ԳԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիք վերագրած մարդու ապրումները, անոր փորձառություններուն արձանագրությունը կը հետաքրքրէ շատերը: Անձնական կը գգամ այդ հետաքրքրությունը այս սիւնակի ընթերցողներուն լայն անդրադարձէն: Ես ալ իմ կարգիս կը հետեւիմ մամուլի եւ այլ միջոցներու մէջ երեւցող նման գրութիւններուն:

Օրինակ՝ գրեթէ ամէն օր կը կարդամ www.Cilicia.com-ի հայրենագրական բաժնիով հրատարակուած եւ այժմ՝ Երեւան բնակող երիտասարդ սփիւռքահայերուն օրագիրները, որոնց մէջ մեծ մասամբ իրենց նոր կեանքին մասին խանդավառութիւններն արտայայտող տողեր եւ իրենց նոր ընկերներուն մասին տեղեկութիւններ կը գտնեմ: Այսպիսի պարզագոյն, իրեն ընթերցող, կ'ակնկալեմ շատ ակտիվ խորքային վերլուծումներու հանդիպել, սակայն յուսալար կ'ըլլամ, որովհետեւ այդ տողն ու աղջիկներուն նպատակը չեմ կարծեր, որ այդ է: Կրնայ ըլլալ, որ իմ ընթերցողներս ալ նոյն խորքայինութիւնը կը փնտնեն այս սիւնակին մէջ եւ չգտնելով կ'ամ կը հեռանան եւ կամ պարզապէս մասնակի բաւարարութեամբ կը փորձեն շարունակել հետեւի գրութիւններուն:

Թորոնթոյի Հայ Օգնութեան Միութեան ամենօրեայ վարժարանի հայկից տնօրէն Մարգար Ծարապխանեանի հեղինակած «Դարձ դէպի հայրենիք» գիրքը, գոր «Դրօշակ» խմբագիր ընկերս Նազարեկ Պերպերեանը բնութագրած է իրեն յուշագրական-ուղեւորական գործ, այս տեսակիներէն շահեկան է, որովհետեւ կը ներկայացնէ Սփիւռքի երկու տարբեր գաղութներու՝ Յունաստանի եւ Քանադայի մէջ ապրած մտաւորական հասուն հայտնի մը մտորումները հայրենիքի մէջ նախ իրեն կարճատեւ այցելու, որ մեզի հետ կը կիսէ տեսարժան գաճազան վայրերու առթած տպաւորութիւնները ու զգացումները, ապա իրեն այնտեղ երկար կեցութիւն ունենալ վճռած մարդ, որ պիտի կերտէ իր նոր կեանքին պայմանները, պիտի գտնէ իր միջավայրը, իր հին եւ նոր ծանօթութիւնները պիտի վերաթմուրէ, պիտի խորացնէ ոմանք, պիտի հեռանայ ուրիշներէ:

Վերագրելով մէջ «Դարձ»ը հետաքրքրական ընտրութիւն մըն է: Ինչու ոչ վերագրած: Արդեօք զոչումի մը յոյժ մը կայ, եթէ այո, արդեօք պարզապէս ափսոսանք մըն է կորսուած առիթներու եւ ժամանակներու: Կրնայ ըլլալ, անշուշտ, բոլորովին պատահական, տնտեսումի մը կամ բանաստեղծականութիւն մը հետապնդող որոշումի մը արդիւնք: Յամենայնդէպս, 1990 թուականէն Հայաստան քանիցս այցելած, վերջին տարիներուն պատմական կարեւոր նշանակութիւն ունեցող դէպքերու եւ իրադարձութիւններու վկայ ըլլալու պատեհութիւնը ապրած եւ այդ պահերուն իր զգացումները հարազատօրէն փոխանցած, ի վերջոյ երեւանի մէջ սեփական տուն գնած ու այնուհետեւ կեանքին մէկ կարեւոր մասը հայրենիքի մէջ անցնելու վճիռը կայացուցած մարդու մը ապրումներն ու մտքերը անպայմանօրէն պիտի հետաքրքրեն ձեզ ալ:

Այս գիրքը եւ կը նկատեմ տակաւին առաջին հատորը Ծարապխանեանի հետագայ ուրիշ աշխատանքներու, որոնց մէջ թերեւս պիտի գտնեմ այն խիստ շահեկան փորձառութիւններուն պատմումները, որ նոր ժամանակներու հայրենագրած մարդը, մանաւանդ մտաւորականը, պիտի ունենայ երեւանցիներու կամ հայաստանցիներու հետ իր ամենօրեայ շփումներուն ընթացքին: Վերագրողներուն դիմագրաւած դժուարութիւնները, յուսալարութիւններն ու յուսալարութիւնները, տարբեր միջավայրերու մէջ հասունութեան հասած հայտնիներուն գոյակցութեան ընթացքին փոխադարձ հասկացողութիւններն ու ստեղծուած թիրախագոյնները, ուսանելի այնքան հարուստ նիւթեր կրնան մատակարարել նոյն ուղին բռնելու տրամադիր այլ հայտնիներուն կամ մեր ազգային ներկայ վիճակը քննութեան ենթարկող ընկերաբաններուն համար:

Բաւական բարդ իրականութեան մէջ կ'ապրին մեր ժողովուրդին գաւակները արտերկրի թէ հայրենիքի մէջ: Հիմա, որ կարելիութիւնը ստեղծուած է մէկտեղուելու երկրին մէջ, փոխադարձ բանաշուրտի, առկայ նախապաշարումներու, կարգապարտած պատկերացումներու վերաբերման հանգիստ գործ կայ կատարելու Ծարապխանեանի եւ իր նմաններուն կողմէ: Նազարեկի ակնարկը յուսալարակի տակ կ'առնէ գիրքէն բխած եւ անոր շնորհահանդէսին ընթացքին եւս դրսեւորուած նման նախապաշարումները՝ իր հատու գնահատականը տալով անոնց:

Ծարապխանեան կը ներկայանայ պատրաստ դիմագրուելու այդ մարտահրավերները: Իրեն բազմամենա փորձառու կրթական մշակ իր ուշադրութիւնը կը կեդրոնացնէ երեւանի Խրիմեան Հայրիկի անուան դպրոցին վրայ՝ բարոյապէս եւ նիւթապէս օգտակար հանդիսանալով անոր, եւ իր շրջանակի բարեարարներուն նուիրատուութիւնները ուղղորդելով այդ հաստատութեան բարեկարգման նպատակներուն:

Գտած ըլլալով զինք գոհացող ընկերակցան շրջանակը, թէ իրեն մտաւորական, թէ իրեն գրող, Ծարապխանեան առաւել կ'իմաստաւորէ իր հանգստեան շրջանը, կը կարողայ հայրենի հանձնօրեայ մամուլը, կը հետեւի քաղաքական եւ հասարակական իրադարձութիւններուն, կը վայելէ հայրենիքի մէջ սեփական տուն ունենալու հոգեկան բաւարարութիւնը:

Գիրքը տպագրուած է Երեւանի մէջ՝ դասական ուղղագրութեամբ: Իրենց իրենց խօսուած երկու փաստեր...

ՏԱՆՁՈՒԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԸ ԶՔՆԱՂ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՉԱՒԱԽՔ

Կարծախը եղած է ռազմամարդ չէն գիւղ: Ամէն տարի Յունիսի զիւղացիներ փառաւոր շուքով, տօնախմբութեան եւ ցնծութեան միջոցառումի մէջ նշած են Ջիւանիի օրերը: «Ջիւանիի օրերուն ոչխար, գառ էինք մորթում, հիւրերուն հիւրասիրում: Ուղղաթիւրը կու գար, դեկտեմբերը կու գային, լիքը ժողովուրդը կու գար, տարբեր-տարբեր տեղերից, Հայաստանից, Վրաստանից, Ազրպէյճանից: Մեր հարազատներն էլ գալիս էին Հայաստանից, մեծ սեղաններ էինք գծում, ուտում-խմում, երջանկանում: Սերո Սանգադեանն էր գալիս, Լեւոն Իսպիրեանն էր գալիս, լաւ համերգներով, ճոխ սեղաններով, համ մենք կ'ուրախանայինք, համ էլ՝ իրանք», կը պատմեն զիւղացիները:

Գիւղը բաժնուած է երեք գլխաւոր թաղերու: Կարծախ, Կիլերթա եւ Նորաչէն: Ջիւանիի ծնած է Կիլերթայի մէջ, որուն մասին ան յիշատակութիւն մը ունի իր «Հովիկ» երգին մէջ: «Առաւօտեան բաղր հովիկ, նա դէպի երկիր Ջաւախ, Ունիմ մէկ ծերունի մայրիկ, նա տես ի գիւղն Կարծախ»

Նա յատկապէս Կիլերթա, նա է մեր գիւղի մէջ մէկ թաղը:

Ջիւանիի կիսանդրին կանգնած է զիւղին հրապարակը, իսկ անոր թանգարանը կառուցուած է քիչ անդին, սակայն Ջիւանիի օրուն ամսական արձուագները կարծէք պատմութեան անցած են այլեւս: «Հիմա արդէն էք վերջացել է: Ժողովուրդը ուտելու հաց չունի: 95 թուականէն ոչ մի բան չի եղել: Ջիւանիի էլ մոռացանք, մեր ծննդավայրն էլ մոռացանք, հաց ուտելն էլ մոռացանք, ոչ մի լաւ բան չկայ», կ'ըսեն բարկացած զիւղացիները:

Կացութիւնը ծանր է, յուսահատական ըլլալու աստիճան, բայց Ջիւանիի իմաստութիւնը միշտ կը մնայ թեթեւակամ՝ «Ձախորդ օրերը ծմբան նման կու գան ու կ'երթան» (Շար. 13)

Վհատելու չէ, վերջ կ'ունենան, կու գան ու կ'երթան Դառն ցաւերը մարդու վերա չեն մնա երկար, Որպէս յանախորդ շարուն շարուն կու գան ու կ'երթան:

Ջիւանի «Ձախորդ օրեր»ուն մէջ խտացուցած է ջաւախեցի հայ մարդուն դարբերու փորձառութիւնը՝ բանաստեղծական պատկերներու եւ անզուգական մեղեգիի ներդրանակութեամբ: «Ձախորդ օրեր»ը հայ ժողովուրդի ամէնէն հաւատարիմ ընկերը եղած է եւ երբեք լքած չէ զայն՝ նոյնիսկ ամէնէն օրհասական պահերուն: Հայ իր կեանքի գծողակ օրերուն շատ անգամ ազօթիքի փոխարէն մրմնջած է այդ երգը:

Իր ժողովուրդը ոգեւորող, անոր վիշտն ու լուրախութիւնը, խոհերն ու երգերը իր գործերով յաւերժացնող Ջիւանիի անմոռաց է: Օգնութեան կանչէնք թումանեանի «Թմկաբերդի Առու»-ը:

«Գործն է անմահ, լաւ իմացք, Որ խօսուում է դարե դար...»:

Թմկաբերդը կը գտնուի Ջիւանիի ծննդավայրէն ոչ շատ հեռու, Ասպինձալի շրջանին մէջ, կուրի ձախ ափին: Ձաքարեաններու պատմական իշխանահիստ բերդաքաղաքը հասնելու համար Կարծախն ուղղակի ճամբայ չկայ: Հարկ է կտրել Ախալթալաք - Ախալցխա ճամբան եւ ճամբուն կիսուն, վրացական խերթ-վիս բերդէն ձախ թեղուցի՝ 20 քմ. ուղղուելու հարաւ: Ճամբան համեմատաբար լաւ է, տեղ-տեղ կուպրի հեռքեր կան: Զրօսաշրջական կեդրոն մը ըլլալու կողքին, Ասպինձան (հայկական աղբիւրներու Ասպինջալը) Սամբուէ Ջաւախեթի վրացական բնակչութիւն ունեցող շրջաններէն մէկն է, որ Ախալթալաքն ու Ախալցխան կը բաժնէ իրարմէ: Ունի հայկական միայն մէկ գիւղ՝ Դամալան:

Վ. ԱՒԱԳԵԱՆ

ԱՄՈՒՍԻՆՍ ... ԳԵՈՐԳ ԶԱՒՈՒՇԻՆ

- Կեանք է: Դուք հայրը քանի՞ քանի օտար լեզու կը խօսէք: Օտար մը լեզու ձեր լեզուով խօսի, հրա՞ջ կ'ըլլայ: Այս օրերուս, երբ մեր գաւակներն իսկ չեն զիջիլ մեր լեզուով խօսիլ, իսկապէս որ հրա՞ջ է ոչ հայու մը ըրերէն հայերէն, այն ալ ի՞նչ հայերէն լսել: Բայց նա չեմ հաւատար, որ հայ յու՛ր մը չես դուն: Պետրոս, դուն կը հաւատաս, որ այս շնորհալի էակը հայու՞ն է: Ի՞նչպէս հաւատամ, եղբայր: - Քիչ մը ակտիվ շմբողներ մ'է՛ք: - Դե՞մ... - Հապա՞... ըսեմ, որ ես ոչ միայն հայ չեմ, այլ նաեւ ձեզի հաւատակից չեմ: - Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ... - Ես լիբանանցի արար եւ իսլամ եմ ծնունդով: Ամուսինս ալ արար է եւ իսլամ: Սորբէն մէջ ազգականս ալ է: - Եղբայ՛ր, եղբայ՛ր, մեղա՛յ, Յիսո՛ւ Քրիստոս... Պետրո՛ս, իմ լսածս դո՛ւն ալ կը լսես: - Լսելը կը լսեմ, բայց չեմ հաւատար: Եղբայ՛ր, հաւատալիք բան չէ: Չարածնի ժպիտով մը կարծուութիւն խնդրած էր իրեն՝ յաճախորդի մը ապսպարանքը յանձնելու համար: - Այս կիւր շաբաթ է երբ, հապա այս ի՞նչ հայերէն է իր ըրերին մէջ: Հանելուկին հանելուկն է այս Սամբուէն: - Եթէ այս հանելուկը

ես եմ, բացատրեմ: Լաւ չէ, որ այսպէս մեծ ցնցում ապրիք: - Հա՛, աղջիկս, պատմէ, որ բան հասկնանք: Շշմեցուցիլ մեզ, մարդ Աստուծոյ: - Հիմա կրնամ պատմել, սակէ ետք, շուրջ մէկ ժամ, մեզ խանգարող յաճախորդ չի գար հոս: Միայն թէ կրակին վրայէն սրճեփոքերեմ: աղուր լիբանանեան սուրճ է: - Սուրճը կարեւոր չէ, պատմէ մեզի քու հանելուկը: մարդուն հաւատալը չի գար, ով ի՞նչ ուզէ թող ըսէ: - Սուրճը հիւրասիրութեան հիմնական խորհրդը թանրիչն է: Լիբանանէն ուղղակի ներածուած մեր սուրճը սքանչելի է: չէք կրնար մերժել: - Աղջիկս, դուն ի՞նչ որ ըսես, այնպէս կ'ընենք: Միայն թէ շատ մի՛ տնտնար: - Վայրկեան մը, միայն... Սամբուէ վերագրած ձաւ բուրբուրմունք տուրճի գաւաթները վրան շարած սկուտեղը ուսերէն վեր բռնած: Իւրաքանչիւրին մէկական գաւաթ հրաժանել է ետք խոշորիկ սրճեփոք մէկ կողմ հեռ: - Երբ գաւաթը պարպուի, անմիջապէս կը լեցուի: այս սրճեփոք պիտի պարպէք... - Աղջիկս, սրճեփոք ալ կը պարպենք, կարասն ալ: որո՞ւ հոգ արեան թէնջըն, բոլորս սրճեփոք մէ՛ միայն:

«ԱՁԴԱԿ»Ի ՀԵՌԱՋԱՅՆԻ ԹԻՒՒՆԵՐԸ «ԱՁԴԱԿ»Ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԳԵՈՐԳ ԱՔԷԼԵԱՆ (Շար. 2)

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ «ԱՁԴԱԿ»Ի ԴԵՍ ԱՌ ԴԵՍ ԷԶԻՆ ԱՌԻԹՈՎ

ՈՂՋՈՒՆԵԼԻ ՈՍՏՈՒՄԸ

Հայ մամուլի բարգաւաճման եւ վերանորոգման գործընթացին սատար կանգնող ամէն նախաձեռնութիւն ինքնին պերճախօս վկայութիւն է հայ ընթերցասէր հասարակութեան նկատմամբ յարգանքի գրասերութիւն, որուն նորայայտ պատկերումին ակնանտեք հանդիսացաւ առ հասարակ աշխարհասփիւռ հայ իրականութիւնը, եւ ի մանաւորի լիբանանահայ գրասէր գանգուածը:

Արդարեւ, «Ազդակ» օրաթերթի խմբագրութեան գօտեպնդիչ եւ նախաձեռնող զորոշումով, օրաթերթը օտտուեցաւ յոյժ գնահատելի «էջ-պատտ»ով մը, այլապէս հայեցակետային կուր տրամաբանութեամբ ընթանալու, արհեստագիտական եւ լրատուական բարձրորակ նուաճումներու ընձեռած կարելիութիւններէն օգտուելու եւ նախադրական ամբողջ համակարգ մշակողք հաստատելու համոզումն է մեկնած:

Խորաթափանց հայեացք մը ժամանակակից հայ մամուլի պարզած իրավիճակին, անոր մեկնարկային եւ արժեքբաբանական հոյովոյթին, վիճակուած բազմաբնույթ մարտահրաւերներուն, ինքնադրականութեան եւ ինքնահաստատման ամօթխած եւ սակայն շնորհակալ ճիգերուն, յստակօրէն կ'ուրուագծուին հետագայ մտածումներու առանցքային շեշտադրումն ու ստորագծումը:

Պարզ է, որ կշռադատումը չի վերաբերի սուկ բովանդակային եւ թեմաներու ճշգրտման, այլ՝ ժամանակակից կեանքի բաղկացուցիչ մարքերու սահմանումին, եղափոխական որոշողիչ միտքերու ընդգրկումին, ոգեղինացած ներքին տեսողատեքու առարկայական մատուցումին, համաշխարհայնացման հակոտնեայ երեւոյթներու դէմ թիաւաբելու տարբեր պիտակի ռազմավարութիւններու որդեգրումին, եւ, մանաւանդ, մեր շրջապատի հեղինակեմծասանութեան հետ հաղորդակցութիւն ստեղծելու անժամանցելի հրամայականին, պատեհապաշտ հոգեվիճակներու տարանջատումին, եւ ստուգապէս վեհափառ տեսիլներու առաւել ունեացումին եւ ապագայակերտ յղացքներու վերելքին նպաստի ձեռքբերումին:

Ի դէպ, նմանատիպ բնութագրելու իրավիճակներու վաւերական ցույքներն են անտարակոյս, երիտասարդ խոստմանից եւ հայաշունչ ոգիով ակադեմի մեթոդայ տակաւ խմորուող նորահաս գրողներու մտքի ստեղծագործութիւնները, ապագայ լիիրտ մտաւորականի պատմուհանը հանդերձեմու յոյսով ու ակնկալութեամբ, քիւրու կրելով առօրեայ կեանքի առթած բացասական հետքերը:

Ո՛չ, առհասարակ աշխարհահոչակ գրագէտ Փաւլօ Քուրիլոյի նման մեծութիւններու ծանօթացման շարժառիթ ձեռնարկները չեն մեզ խանդավառողը, որքան նմանատիպ յեղափոխիչ յատկութեամբ օտտեալ տիտաններու պատգամներուն անսալու ունակութիւնն ու ազնուութիւնը ցոյց տուող երիտասարդական խանդակ, վեհափառութեան եւ ներկայութեան, որոնց շարքերու խտացումին կոչուած է հայ մամուլը, իր բովանդակ էութեամբ:

Որոշապէս հայ մամուլի բազմերանգ բնագաւառներու ծառայողական համընդհանուր յատկութիւններուն ակնաշարու, անոնց ամբաբարձման հակամետ իրեայաշողի փաղանգներ, ակտիվ բան երբեք, այսօր հրախորուած են ստանձնելու եւ արժանաւորապէս դիմակայելու այն նեղմիտ, հեծմաշէ եւ ստրկացնող յորձանուտը՝ որով շրջապատուած ենք հաւաքաբար, ցուցաբերելով կիրք յուզաշխարհ, տոկուն վարքագիծ, մարդկայնական վերաբերում եւ ազգային գաղափարական լիցք:

Բնահանաբար, միւս կողմէ, ազգային հոգեմըտաւոր գանձարկելի ակունքներէն սեռած հանձնարներու շօշափելի ըմբռնումն ու նախադրութիւնը, վստահութիւնը ներշնչող պատուանդան մըն է, որոնցմով հայտարանալու ամէն կերպ աստիճանական մագլցումն է խորախորհուրդ արժեքափերու վաստակումին:

Սանձազերծ եւ փշաքաղիչ երեւոյթներով ծանրաբեռն մեր առօրեային տօգոյն արահետները լուսաւորելու, այլապէս նորահաս սերունդին հոգեբանական եւ աշխարհաընկալման ձեւաւորումը ջամբելու նպատակաւորողուած է խիզախ աշխատելու ի տարբեր արտայայտութիւն մըն է վերոյիշեալ աթթը, լրատուական անդաստանէն ներս:

Վերջապէս, զգացական զեղումներէ եւ փառատեան զորոգայթներէ անդին՝ արձագանգող տողերը, պարզապէս խանդաղախայից են քաջալերելի կեանափորձերու վերահաստատման ծառայող համեստ ներդրում մըն է: Նաեւ՝ յաւելեալ փաստարկ մը, երիտասարդական ենք ներդրող մտքի առկայութեան, անվիճելի ուժականութեան եւ հրաշակերտ էութեան:

ՀԱՄԲԻԿ ՊԵՆԱԼԵԱՆ

www.hamazkayin.com


«ԱՉԴԱԿ»-Ի ՆԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԻՐ ՆԱԳԱԳՐՈՅՑԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ ՓԻԹԸՐ ՊԱԼԱՔԵԱՆ Կ'ՐՍԷ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ ԹՈՒՐՔԻՈՅ ԿՈՂՄԷ՝ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ Է ՀԱՅ-ԹՈՒՐՔ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ



Փիթըր Պալաքեան նախապես հեղինակած է 8 գիրքեր, որոնց կարգին՝ «Ճակատագրի սև շուկը» (Black dog of fate) յուշագրութիւնը, որ 1998ին շահեցաւ «ՓԵՆ/Մարթա Օլպրոնտ» մրցանակը եւ արժանացաւ «Նիւ Եորք Թայմզ»-ի բարձր գնահատանքին: Պալաքեան Ամերիկահայտուծեան Փի. Էյժ. Տի.ի արժանացած է Պրաուն համալսարանէն եւ կը դասախոսէ Զոլլիքը համալսարանին մէջ: Իբրեւ բանաստեղծ ան նոյնպէս տիրացած է մրցանակներու:

Պալաքեան իր կնոջ եւ երկու զաւակներուն հետ կը բնակի Լոնտոն, Նիւ Եորք: Խմբագրութիւն Պալաքեանի հետ կապուեցաւ աւելի քան ամիս մը առաջ: «Այրող Տիգրիսը» գիրքին հեղինակը սիրով ընդառաջեց հեռաձայնային հարցազրոյց մը կատարելու գաղափարին: Չուրջ մէկ ժամ տեւած զրոյցին ընթացքին արժարձուեցան Հայկական Ցեղասպանութեան եւ յատկապէս՝ «Այրող Տիգրիսը» գիրքին առնչուող բազմաթիւ հարցեր: Հարցազրոյցը որոշ յայտարարումներով կը ներկայացնենք ըզդի սիւնակներով:



ԿԱՐԾԻՔՆԵՐ «ԱՅՐՈՂ ՏԻԳՐԻՍԸ» ԳԻՐՔԻՆ ՄԱՍԻՆ

«... Բարոյական պատմութեան զուլի-գործոց մը, որ պէտք է լայնօրէն կարդացուի եւ մեծ թիւով ընթերցողներ ունենայ:»

ՓՕԼ ՅԱՍՏԼ Կեղիսակ՝ «Տը կրէյթ» ուր էնտ մուտքն մէնքրի» գիրքին

«... Չախշախիչ հակահարուած մը Ցեղասպանութիւնը ուրացողներուն:»

ՊԵԼԻՆՏԱ ՔՈՒՓԸՐ «Նիւ Եորք Թայմզ Պոլք Ռիվիւ»

«Անկիւնադարձային գիրք մը, հարուստ փաստագրումներով, ընդդէմ թուրքիոյ կառավարութեան՝ աշխարհը համալելու ճիգերուն, թէ ոչ ինչ պատահած է:»

ԷՆ ԿՐԱՆԹ «Տը Փրովիտընս Ճուռնըլ»

«Պատճառ մը եւս, որ Արեւմուտքի կառավարութիւնները ամչնան...»:

ՔԻՐՔԸՍ ՌԻՎԻՐՈՅ «Քիթ Բրաուն»

«Պալաքեան ցոյց կու տայ, թէ ինչպէս Հայկական Ցեղասպանութիւնը 20րդ դարու այլ ցեղասպանութիւններու նախընթաց հանդիսացաւ:»

ԹՈՍ ԿՈԼՏԵԹԱՅՆ «Սան Յրանսիսո Բրոնիքըլ»

«Դեմ առ դեմ»-ի հարցազրոյցները իրենց բնագիրով եւ հայերէն թարգմանութեամբ կը տեղադրուին «Ազդակ»-ի կայքի (www.aztagdaily.com) «Հարցազրոյցներ» բաժնին մէջ: Հարցազրոյցներուն անգլերէն տարբերակները կարելի է կարդալ նաեւ «Կոնցէ» լրատուական ցանցին վրայ (www.groong.com/news): «Դեմ առ դեմ»-ի հարցազրոյցները կը հրատարակուին երկշաբաթեայ դրութեամբ, Հինգշաբթի օրերը: Մեր յաջորդ հարցազրոյցը՝ 27 Նոյեմբերին: Չեր տպաւորութիւնները եւ առաջարկները կրնաք փոխանցել խմբագրութեան, Ե-ճամակի հետեւեալ հասցին միջոցով՝ temartem@hotmail.com

«ԱՉԴԱԿ».- «Այրող Տիգրիսը» գիրքին մէջ կ'ըսէք, թէ Համիտեան ջարդերը եւ Հայկական Ցեղասպանութիւնը մարդկային իրաւանց միջազգային մակարդակի առաջին շարժումը յառաջացուցին Միացեալ Նահանգներու մէջ: Կրնա՞ք մանրամասնել:

Փիթըր Պալաքեան.- Մինչեւ 1896ի աւարտը 200 հազար կեանքեր խլած Համիտեան ջարդերէն հայերը փրկելու ճիգը ծնունդ տուաւ Միացեալ Նահանգներու մէջ մարդկային իրաւանց միջազգային տարողութեամբ առաջին շարժումին: 1890ականներուն ամերիկացիներ շուրջ 300 հազար տղար հանգանակեցին. 1915 - 1920 երկարող Ցեղասպանութեան ժամանակաշրջանին 110 միլիոն տղարի հանգանակութիւն կատարուեցաւ:

Այդ գումարը այսօրու 2,5 միլիարտ տղարին համարժէք է: Այստեղ կարեւոր է նշել, որ մարդասիրական այս շարժումը կը գլխաւորէր ամերիկացի մտաւորական ընտրանին:

«Ա.».- Դուք կը շեշտէք հարցին մարդասիրական երեսը, սակայն Հայկական Ցեղասպանութեան տարողութեան ողբերգութիւններու ընթացքին մարդասիրական օժանդակութիւնները բաւարար չեն, այնպէս չէ՞:

Փ. Պ.- Երբեք բաւարար չեն:

«Ա.».- Ուրեմն միջամտութիւնը պէտք է աւելի անդին ելլար: Փ. Պ.- «Այրող Տիգրիսը» կը խօսի մէկ կողմէ ամերիկեան մշակութային, բարեգործական ու մարդասիրական օգնութեան ճիգերուն եւ, միւս կողմէ, արտաքին գործոց նախարարութեան եւ Սպիտակ Տան յառաջացուած պատին մասին, որ կ'արգիլէր, որ բարեսիրական այս աշխատանքները վերածուին գործօն միջամտութեան եւ ռազմական կամ քաղաքական բնոյթ ստանան: Ասիկա մաս կը կազմէ (Հայկական Ցեղասպանութեան նկատմամբ) Միացեալ Նահանգներու կեցուածքին ողբերգական պատմութեան:

«Ա.».- Այս առումով կարելի՞ է զուգահեռներ գծել այդ օրերուն Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցածին եւ այսօրու կացութեան միջեւ:

Փ. Պ.- Կը կարծեմ, թէ Հայկական Հարցը Միացեալ Նահանգներու մէջ մարդկային իրաւանց հարցերու արդի փարատիմի մը ծնունդ տուաւ. պարզուեցաւ, որ ժողովրդային մակարդակի վրայ եւ մտաւորականներու մօտ կը գոտ յանձնառութիւն մը կրնայ գոյութիւն ունենալ, սակայն տակաւին չենք կրցած գտնել ձեռք չըջանցելու Սպիտակ Տան ստեղծած արգելքները: Միեւնոյն խնդիրն է, որուն դէմ կը մաքառենք այսօր, ահա թէ ինչո՞ւ հայերու պարագան այդքան բան կրնայ սորվեցնել մեզի:

«Ա.».- «Փոլիցըրը» մրցանակի արժանացած Սամանթա Փաուրըի «Դոսիքէն հարց մը» գիրքը նոյնպէս, ի շարք այլ ցեղասպանութիւններու, կ'անդրադառնայ Հայկական Ցեղասպանութեան ամերիկեան հակադարձութեան: Մօտեցումի ինչ փոփոխութիւններ կան ձեր եւ Փաուրի գիրքին մէջ: Եւ արդեօք միմա գիրքեր կրնա՞ն ընկերային փոփոխութիւն յառաջացնել:

Փ. Պ.- Սամանթա Փաուրը գրած է բացառիկ գիրք մը՝ 20րդ դարու ամբողջ ընթացքին ցեղասպանութիւններու նկատմամբ Միացեալ Նահանգներու կրաւորական կեցուածքին մասին: Իսկ իմ գիրքս կ'անդրադառնայ այն երեսակին, թէ ինչպէս ամերիկացիներ փորձեցին փրկել հայ ժողովուրդը, եւ թէ այդ ընթացքին ինչպիսի խնդիրներ դիմագրաւեցին իրենց կառավարութեան կողմէ:

Ինչ կը վերաբերի ընկերային փոփոխութեան, այդ մէկը հեռու է յստակ եւ մեկին գործընթաց մը ըլլալէ եւ զայն կարելի չէ դիւրաւ իրագործել: Ընկերային փոփոխութիւնը կ'ըլլայ արդիւնքը տասնամեակներու վրայ երկարող կրթական եւ դաստիարակական աշխատանքի: Եթէ ռուսամասերէնք արիւստներին մարդկային իրաւանց շարժումը, պիտի տեսնենք, թէ տասնամեակներ ետք է միայն, որ սեւամորթներ եւ սպիտակամորթներ կը նստին եւ կը ճաչեն միեւնոյն ճաշարանին մէջ: Դաստիարակութիւն պէտք է կատարուի ամէն մակարդակի վրայ:

«Ա.».- Խօսի՞ք «Այրող Տիգրիսը»-ին մէջ ձեր օգտագործած աղբիւրներուն մասին: Քանի մը գրախօսակցներու մէջ նշուեցաւ, թէ դուք ձեզ սահմանափակած էք անգլիատառ աղբիւրներով:

Փ. Պ.- Օգտագործած եմ բազմաթիւ փաստաթուղթեր՝ Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարութեան արխիւներէն: Ֆրանսեանն եւ գերմաներէն աղբիւրները, զորս օգտագործած եմ, թարգմանութիւններ են: Նոյնը կարելի է ըսել թրքական փաստաթուղթերուն մասին, որոնց բնագիրները ունէի, սակայն օսմաներէն չեմ գիտեր: Օգտագործած եմ նաեւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան հարիւրաւոր փաստաթուղթեր:

«Ա.».- Արմատներու պեղումի առումով կարելի՞ է «Այրող Տիգրիսը» շարունակութիւնը համարել «Ճակատագրի սև շուկը» խորագրեալ ձեր գիրքին:

Փ. Պ.- «Այրող Տիգրիսը» շարունակութիւն մըն է պատմական ճշմարտութեան հետապնդումին: Չեմ ուզեր պարզ քաղաքական մը կատարել, որովհետեւ «Ճակատագրի սև շուկը» յուշագրութիւն մըն էր, գրական պեղում մը իմ կազմաւորումիս՝ իբրեւ ամերիկահայ: Այդ գիրքը կ'ընդգրկէ պատմութիւն եւ պատմութիւն կը բերէր ընթերցողին, սակայն մեթոտաբանական առումով պատմագրութիւն կարելի չէ նկատել զայն: «Այրող Տիգրիսը» պատմագրութիւն է եւ իմ մօտեցումները տարբեր են:

«Ա.».- Իսկ ի՞նչ էր դրդապատճառը «Այրող Տիգրիսը» գրուելուն: Փ. Պ.- Իբրեւ ամերիկացի, երբ սկսայ բացայայտել, թէ ամերիկեան պատմութեան առումով որքան հարուստ էր այս նիւթը, որոշեցի պատմութիւնը ներկայացնել այդ դիտանկիւնէն: «Այրող Տիգրիսը» Հայկական Ցեղասպանութեան պատմագրութիւն մըն է: Չգացի, նաեւ, թէ մեր պատմութիւնը իր ամբողջութեամբ չէր ներկայացուած լայն տարածում ունեցող Հրատարակութեան մը մէջ, եւ ուզեցի ընել այդ մէկը:

«Ա.».- Իսկ գիրքը գրելու գաղափարը ի՞նչ ձեռքով գարգացաւ: Փ. Պ.- «Այրող Տիգրիսը» գիրքին գաղափարը եկաւ ինձի, երբ «Ճակատագրի սև շուկը» գիրքի ներկայացման շրջապատում կ'ընէի: Կարդալով Հայկական Ցեղասպանութեան եւ ամերիկացիներու ունեցած դերին մասին՝ ինձի յստակ դարձաւ, թէ այս մէկը հարուստ պատմութիւն է: Գիրքին վրայ աշխատել սկսայ 1999ին եւ չորս տարի առանց դադարի, շարունակեցի աշխատանքը:

«Ա.».- Անցեալ տարի «Արարատ» ֆիլմը լայն տարողութեամբ նահանջով ապահովեց Հայկական Ցեղասպանութեան, այժմ ձեր գիրքը կը կատարէ այդ գործը: Ի՞նչ կը խորհիք ձեր գիրքին քաղաքա-

կանանալուն մասին: Ի վերջոյ, «Ճակատագրի սև շուկը» յուշագրութիւն մըն էր, իսկ այս գիրքով դուք ձեզ նետած էք ուրացումի դէմ՝ պատերազմի ուղիղ կեղծումը:

Փ. Պ.- Իմ դրդապատճառս, ինչպէս ըսի, խորունկ եւ հարուստ պատմագրական երկ մը գրել էր 20րդ դարու այս գլխաւոր իրադարձութեան մասին: Մնացեալ կու գայ ենթահողին հետ:

Տրուած ըլլալով, որ ուրացում գոյութիւն ունի, ոեւէ մէկը, որ այս պատմութեան մասին կը գրէ, բնականաբար կ'ուրենայ քաղաքական ուղեգիծ մը: Սակայն չեմ ուզեր կեղծոնանալ ուրացումին վրայ, որովհետեւ փոստ մարդոց փոքր խումբ մըն է, որ կը յարատեւէ այդ բնագաւառին մէջ, եւ խորքին մէջ ոչ մէկը մտիկ կ'ընէ իրենց եւ ոչ մէկը կը հաւատայ իրենց ըսածներուն: Անոնք ազդեցութիւն ունին քաղաքական կարգ մը խաւերու վրայ, սակայն կը կարծեմ, թէ այդ եւս պիտի վերնայ:

«Ա.».- Նկատի ունենալով Թուրքիոյ ռազմավարական կարեւորութիւնը շրջանին մէջ, եւ պարունակի մը մէջ, ուր ոչալ փոխթիքսը, ահաբեկչութեան դէմ պատերազմը եւ «քարիւղի դիւանագիտութիւնը» հետզհետէ աւելի շեշտուած դերակատարութիւն կ'ունենան, կարելի՞ է այդ վերացումը տեսնել մօտիկ ապագային:

Փ. Պ.- Ընկերային եւ քաղաքական փոփոխութիւններ անսխալտեսելի են, երկար տարիներ ենթահող պատրաստելէ ետք այդ փոփոխութիւններուն համար, երբեմն անոնք կը պատահին յանկարծակիօրէն: Կը կարծեմ, թէ ոչ մէկուն համար Հայկական Ցեղասպանութիւնը ուրանալու կարիքը կայ, եւ թուրքերը պէտք է հաշտուին այդ իրողութեան հետ: Այդ մէկը ընելով Եւրոպայի եւ Արեւմուտքի աչքին աւելի յառաջադէմ կ'երեւին: Թուրքիա չի կրնար երկար շարունակել ուրացումը, եւ ժողովուրդին մէջ ցեղասպանութեան գիտակցութեան հասունացումով ուրացումը հետզհետէ առաւել անհեթեթ կը դառնայ: Թուրքերը ուշ կամ կանուխ պէտք է գիտակցին, թէ այդ մէկը ժամանակի եւ դրամի վատնում է:

«Ա.».- Հայկական Ցեղասպանութեան օրերուն մարդկային իրաւանց շարժումները եւ բարեսիրական օժանդակութիւնները նուազ արժարձու են պատմագրութեան մէջ: Այլ երկիրներու մէջ եւս ձեր ներկայացուցած պատմութեան զուգահեռներ կարելի՞ է գտնել:

Փ. Պ.- Անշուշտ: Կարելի է Բրիտանիոյ, Գերմանիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ եւ Ռուսիոյ մէջ հայութեան նեցուկ կանգնելու շարժումներուն մասին գիրքեր գրել:

«Ա.».- Կարելի՞ է բաղադատական մը կատարել Հայկական Ցեղասպանութեան մասին այդ օրերուն՝ եւ այսօր ամերիկացիներուն ունեցած գիտակցութեան մասին:

Փ. Պ.- Ողբերգական յեղաշրջում մը կատարուած է: Հեզնական է երեւոյթը: Նախագահ Հուվըր ետ նայելով այդ օրերուն՝ ըսած է, որ հաւանաբար միայն «Անգլիա» բառը աւելի արմատացած էր ամերիկացի դպրոցականին մտքին մէջ, քան «Հայաստան»: Այդքան ժողովուրդականութիւն կը վայելէր Հայաստանը ամերիկացիներու մտքին մէջ 20րդ դարու առաջին տասնամեակներուն: Աւելի ուշ այդ գիտակցութիւնը ամբողջովին շոգիացաւ, եւ Հայկական Ցեղասպանութիւնը ինչպէս յիշողութեան կորուստի փոսի մէջ: Այսօր այդ գիտակցութիւնը կը վերակենդանանայ, եւ այդ առումով կը խորհիմ, թէ խանդավառող հանգուան մը կ'ապրինք: Մենք՝ ամերիկացիներս կը վերագտնենք մեր կորսնցուցած յիշողութիւնը:

«Ա.».- Ի՞նչ էիք այդ յիշողութեան կորուստի պատճառները:

Փ. Պ.- Կը խորհիմ, թէ գոյութիւն ունէին շարք մը ազդակներ: Նախ՝ թրքական կառավարութեան ուրացումի արշաւը, որ կը միտէր հանրութեան յիշողութեան ջնջել Հայաստանը: Մուսթաֆա Բեմալի թրքական նոր հանրապետութիւնը կ'ուզէր, որ Արեւմուտքը վերցնէ Հայաստանը՝ ռատարի պատատէն: Միացեալ Նահանգները, որինակի համար, տեղի տուին Բեմալի ցանկութեան դիմաց, որովհետեւ հետաքրքրուած էին Թուրքիոյ հետ բարեկամութեամբ, յուսալով, որ կը տիրանան Մուսուլի քարիւղի հանքերուն, որոնք նախքան 1920ականներու Իրաքի փոխանցուիլը՝ կը գտնուէին Թուրքերու հակազիւրիտական Ամերիկեան ընկերային այլ պայմաններ դժուարացուցին Հայկական Ցեղասպանութեան յիշողութեան յարատեւումը մտքերուն մէջ մինչեւ 1960ականները, երբ միջուկային փոփոխութեան: Այս բոլորին կ'անդրադառնամ գիրքիս մէջ:

«Ա.».- Ի՞նչ կը խորհիք հայ - թրքական երկխօսութեան մասին, որ «նորոյթ» է այս օրերուն:

Փ. Պ.- Ճշմարիտ եւ իմաստալից երկխօսութիւնը կրնայ պատահել միայն, երբ ճշմարտութիւնը գոյութիւն ունի: Չենք կրնար վիճել ճշմարտութեան մասին: Անոնք, որոնք կը նստին սեղանի մը շուրջ երկխօսութեան կատարելու համար, պէտք է ընդունին Հայկական Ցեղասպանութեան ճշմարտութեան փաստը եւ ապա միայն կարելի է յառաջանալ:

«Ա.».- Ուրեմն ձեզի համար Ցեղասպանութեան ճանաչումի նախապայման է երկխօսութեան համար:

Փ. Պ.- Այո՞:

«Ա.».- Ձեր գիրքը կրնայ խօսիլ ամերիկացիներուն սրտին, որովհետեւ կը դիտէ Հայկական Հարցը ամերիկեան պատմութեան պրիսմայով: Այդ մէկը կարեւոր է, երբ ամերիկացի հանրութեան կը ներկայացնես դէպք մը, որ տեղի ունեցած է դար մը առաջ՝ Միջին Արեւելի մէջ: Այնպէս չէ՞:

Փ. Պ.- Այո՞, Հայկական Ցեղասպանութիւնը յաճախ կը թուի միջինարեւելեան պատմութիւն մը, որ տեղի ունեցած է շատ առաջ, հեռաւոր վայր մը: Այժմ ամերիկացիներ եւ եւրոպացիներ առիթ ունին տեսնելու, թէ որքան խորապէս Հայկական Աղէտը ազդած է Արեւմուտքին ընդհանրապէս եւ իմ գրքիս պարագային՝ Միացեալ Նահանգներուն:

«Ա.».- Մրագիրներ ունի՞ք Միջին Արեւելք այցելելու: Փ. Պ.- Լիբանան եւ Սուրիա երկու կարեւորագոյն շրջաններն են Հայկական Սփիւրքի պատմութեան մէջ եւ կ'ուզեմ այցելել այդ երկիրները մօտիկ ապագային:



Հարցազրոյց վարեց ԽԱԶԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ



ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՒՑՆԵՐ

Լիբանանեան կեանքի երեւոյթներ

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԱՂԲԵՐԸ ՆԵՐԿԱՅ ԵՆ ԱՄԷՆՈՒՐԵՔ, ԻՍԿ ԱՆՈՆՑ ԼՈՒԾՈՒՄԸ ԱՆՅԱՅՏ Է

Լիբանանի մէջ աղբերը «ազատ քաղաքացիներ» կը նկատուին, անոնք յստակ վայրեր չունին եւ կը յայտնուին ամէն տեղ՝ առանց նկատի ունենալու, թէ այդ շրջանին շուրջ բնակարաններ կան, քաղաքացիներ կ'ապրին եւ կը շնչեն աղբերու պատճառով ապականած օդը:

Աղբերուն հարցին եւ անոնց լուծումը մը գտնելու թղթածրարը, ըստ պայմաններու, կը յայտնուի կառավարութեան նիստերու օրակարգներուն վրայ, եւ այդ առնչուած ծրարները ու մանրամասնութիւնները կ'աւելան, սակայն նոյն պայմաններուն բերումով անիկա կը փակուի եւ կը դրուի դարակներուն մէջ:

Վերջին շրջանին աղբերու թղթածրարն ու գանոնք հաւաքելու եւ մաքրելու աշխատանք ծաւալած «Սուբլին» ընկերութեան հետ համաձայնութեան պարագան գանազան առիթներով արծարծուեցաւ, ինչպէս նաեւ ճշգրտեցան Լիբանանի մէջ աղբերով կուտակուած վայրերու կեդրոնները: Սակայն, հակառակ անոր որ հարցը դրուեցաւ նախարարաց խորհուրդի նիստին, արծարծուեցաւ եւ ներկայացուեցան անոր գանազան կողմերը, յստակ լուծումներու առաջարկներ չկան ներկայիս, եւ այս հարցը հետզհետէ աւելի կը բարդանայ: Աղբերուն համար տակաւին գոյութիւն չունին յստակ ծրագրերը, եւ անոնք կը շարունակեն ողողել Լիբանանի գանազան շրջաններն ու գրաւել ընդարձակ տարածքներ:



կերպով այս ապականումը կը ներշնչեն: Կացուցիւնը ահաւոր եւ ահազանգային է այն շրջաններուն մէջ, որոնց մօտերը գոյութիւն ունին կուտակուած աղբեր: Եւ անոնք հոն մնացած են երկար ժամանակով եւ մեղմեցող, ճանճերն ու միջատները կը թռչին անոնց շուրջ: Այդ աղբերուն յառաջացուցած հոտը անտանելի դարձած է, եւ անոր շուրջ ապրող քաղաքացիներուն բարձրացուցած ձայնին հակառակ, տակաւին անոնք կը մնան հոն, ուր որ են, եւ անոնց համար լուծումներ չեն առաջադրուել:

Հարցը աւելի տագնապալի դարձած է եւ կը սպառնայ աւելի վատթարանալ, որովհետեւ աղբերը հաւաքելու համար համապատասխան ընկերութիւններն ու քաղաքացիները պատասխանատուութիւններ սկսած են իրարու վրայ ձգել, եւ վերջապէս աղբերը կը մնան այնպէս, ինչպէս որ են, եւ ոչ ոք կը հաւաքէ գանոնք:

Քաղաքացիներուն համաձայն, շրջաններուն աղբերը հաւաքելու իրենց պարտականութիւնը չէ, կառավարութեան որոշումով անիկա յանձնուած է ընկերութեան մը եւ այդ պատճառով իրենց պիտու ճէն յստակ գումարներ նկատի չեն առնուիր այս ուղղութեամբ:

Ըստ պաշտօնական տուեալներուն, Պէյրութի մէջ աղբերը հաւաքելու համար տրամադրուած գումարը կը հասնի տարեկան 25 միլիոնի, սակայն այս գումարներուն համաձայն մաքրութիւն չի կատարուիր մանաւանդ մայրաքաղաքէն հեռու գտնուող կարգ մը շրջաններու մէջ:

Կացուցիւն լուծում մը գտնելու միտումով տեղի ունեցած, սակայն խորքին մէջ այլ տագնապներու դուռ բացող երեւոյթ մըն է նաեւ աղբեր այրելը, որուն պատճառով ծուխը հարիւր տոկոսով վնասակար է գայն շնչողներուն:

Մասնագէտներ դիտել կու տան, թէ հարցը չի կայանար միայն աղբերը հաւաքելուն մէջ, այլ անոնք պէտք է յստակ միջոցներով վերարտադրել եւ փճացնել, որպէսզի անոնք չվնասեն քաղաքացիներուն եւ իրանանեան հողին, ջուրին եւ օդին:

Այս ուղղութեամբ ծրագրերը գոյութիւն ունին, եւ գանազան ընկերութիւններու կողմէ յստակ յատկազօծներ ներկայացուած են, սակայն անոնք գործադրութեան չեն դրուած եւ կը սպասեն պատասխանի:

Այդ ծրագրերուն գիմնով խորքին մէջ հարցը որոշ չափով կը լուծուի եւ գոնէ նոր աղբեր կ'ոչնչացուին:

Հետաքրքրական է, որ կենսոլորտի պահպանման համար արշաւի ձեռնարկած կազմակերպութիւններ կը փորձեն ժողովուրդը դաստիարակել եւ անոնց սորվեցնել աղբերէ ձերբագտելու ձեւերն ու միջոցները: Այս պարագան իրաւացի է, որովհետեւ իրանանցիները եւս աղբերը նուազեցնելու իրենց սահմանուած աշխատանքը չեն տանիր, որովհետեւ խորքին մէջ կարելի չէ աղբի շնչին քանակ մը չէզոքացնելու տագնապ մը լուծել: Նախ կառավարութիւնը պէտք է քայլեր առնէ եւ ստիպէ քաղաքացիներուն, որ հետեւին տուեալ ծրագրերին՝ թիթեղները, ապակիները եւ օրկանակները կտրուելու պարտաւոր յայտարարելով: Սակայն, երբ այս համակարգը գոյութիւն չունի, անիմաստ են քաղաքացիներուն կողմէ կատար-



Լիբանանի մէջ կատարուած ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ իւրաքանչիւր քաղաքացի օրական 7 - 9 քիլոկրամ աղբ կ'արտադրէ, եւ եթէ նկատի ունենանք, որ վերջին վիճակագրութեան համաձայն Լիբանանի բնակչութեան թիւը կը հասնի շուրջ 4 միլիոնի, ի յայտ կու գայ, որ Լիբանան ամէնօրեայ դրութեամբ շուրջ 4 հազար թոն աղբ կը դիզէ, եւ այս թիւը շատ բարձր կը նկատուի Լիբանանի պէս փոքր երկրի մը համար: Ուսումնասիրութեան համաձայն, աղբերուն 50 - 70 առ հարիւրը կը կազմեն օրկանական նիւթերը, ինչպէս՝ ուտելիքներ, բանջարեղէններ, մանուկներուն շորերը եւ այլն: Մնացեալ աղբերը հիմնականօրէն կը կազմեն թուղթերը, խաւաքարտերը, կերպրակալ շիշերը, ապակիները, մետաղները եւ այլն:

Ասոնց կողքին կան նաեւ ագարակներէ եկած աղբերը, քիմիական նիւթերը եւ մաքրութեան նիւթերը, որոնք խորքին մէջ նոյնիսկ կրնան վտանգաւոր ըլլալ եւ գանոնք պարզ աղբերուն հետ պէտք չէ գետեղել:

Ըստ մասնագէտներու, Լիբանանի մէջ կացութիւնը բարդացած եւ հասած է անլուծելի սահմաններու, որովհետեւ պետութիւնը մնայուն կերպով դիմած է ժամանակակից եւ արագ արդիւնք տուող լուծումներու՝ մոռնալով, որ ժամանակի թաւալումին հետ այդ լուծումներուն դիմելը անկարելի պիտի ըլլայ, եւ այս հարցին առնչութեամբ պէտք է արմատական լուծումներու դիմել:

Ժամանակակից լուծումներու հիման վրայ աղբերը կուտակուեցան այլազան շրջաններու մէջ եւ անոնք իսկական ապականում պատճառեցին քաղաքին, սակայն այդ ապականումի ահազանգը եւս արդիւնք չտուաւ, իսկ այսօր հարցը աւելի բարդացած է, որովհետեւ կարծր աղբերը դիզուած են ամէն տեղ, եւ նոր արտադրուած աղբերու կուտակման նոր վայրեր գտնելու դժուար դարձած է:

Արդարեւ, կատարուած ուսումնասիրութիւններուն համաձայն, դիզուած աղբերը կարելի է գանազան միջոցներով փճացնել եւ կամ գանոնք վերստին օգտագործելի նիւթի վերածել, սակայն այս միջոցներուն չէ դիմուած օրին այլազան պատճառներով, որոնք յստակ չեն, եւ որոնց պատճառով այսօր աղբերու հարցը տագնապի վերածուած է:

Աղբերու կոյտերը վնաս կը հասցնեն հողին, օդին եւ ջուրին, ինչպէս նաեւ՝ գանոնք օգտագործող եւ շնչող իրանանցիներուն: Այս բոլորին պատճառով թէ՛ ժողովուրդը եւ թէ՛ համապատասխան կազմակերպութիւնները ահազանգ չենցուցած են այս ուղղութեամբ եւ անոնք կը պահանջեն լուծումներ գտնել այս հարցին եւ գետերուն մէջ ու բնակարաններուն մօտերը դիզուած աղբերէն ձերբագտելու ձեւեր գտնել: Այս տարուած ընթացքին աղբերու քանակը բազմապատուեալ է, եւ տարիներու ընթացքին դիզուած կոյտերու ապականումը աւելցած է: Այս ապականումը հասած է վտանգաւոր աստիճաններու եւ Պէյրութի մէջ երթեւեկող ռեւէ անհատ արդէն կը շնչէ անոնց «բոյր»: Այս հոտը այնքան շեշտուած է, որ քաղաքացիներուն համար ան սովորական դարձած է, եւ անոնք մաքուր օդին փոխարէն մնայուն



լած նախաձեռնութիւնները:

Պատասխանատուութիւններէ խուսափելու գործընթացին մէջ մեծ գործարաններն ու հաստատութիւնները եւս իրենց աղբերուն համար յատուկ միջոցներ չեն դիմեր, եւ նոյնիսկ կարգ մը հիւանդանոցներ իրենց քիմիական նիւթեր պարունակող աղբերը պարզապէս աղբերու տակաւներուն մէջ կը դնեն եւ կարգ մը պարագաներու կը վտանգեն քաղաքացիներուն կեանքը:

Աղբերը առկայ են ամէն տեղ եւ անոնց համար եղած քննարկումներն ու վէճերը կը շարունակուին, սակայն յստակ ու վերջնական լուծման մը հասնելու ընտրանքը կը յամենայ, եւ հարցը, ինչպէս շարք մը այլ հարցեր, լուծման սպասելու ընթացքին մէջ աւելի եւս կը բարդանայ ու անլուծելի կը դառնայ:

Պատրաստեց՝ ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ԾԱՆՈՒՅՈՂ ՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ
«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէ կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ Գաղղնտրար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Ստող Մնայու Գաղտնիքները

ԲՆԱԹԵԼԻ ԳԼԽԱՒՈՐ ԱՂԲԻՐԸ՝ ՑՈՐԵՆԻ ԹԵՓԸ

